



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ № 15Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՈՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018 թվականի հուլիսի 27-ին, քննարկելով դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամներ ընտրելու վերաբերյալ հարցը, հիմք ընդունելով դատավորների ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի՝ դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողովի անդամներ ընտրելու վերաբերյալ արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 77-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ձևավորել դատավորների ընդհանուր ժողովի ուսումնական հարցերի հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) Վճռաբեկ դատարանի դատավոր Ստեփան Միքայելյան՝ 5 տարի ժամկետով.

2) ՀՀ վերաքննիչ դատարաններից՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Մարգարիտա Հարթենյան, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Ալեքսանդր Ազարյան և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Քրիստինե Մկոյան՝ 5 տարի ժամկետով:

3) Առաջին ատյանի դատարաններից՝ ՀՀ վարչական դատարանի դատավոր Անի Հարությունյան, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներ Արշակ Վարդանյան և Արթուր Ստեփանյան՝ 5 տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

27 հուլիսի 2018թ.
ք.Երևան